այսօր այդ ձեռագրերը գտնվում են Մաշտոցյան Մատենադարանում։ Հակառակ այս իրողության, մինչև այսօր էլ կան բանասերներ, որոնք հաճախ վկայակոչումներ են կատարում ընթերցողին հղելով ոչ թե այդ ձեռագրերի ներկա թվահամարներին, այլ՝ Տաթևի գրատան, որը վաղուց ի վեր գոյություն չունի։

Տաթևի նախկին գրատան ձեռագրերից այսօր Մաշտոցյան Մատենադարանում են գտնվում 147-ը, որոնք պահվում են հետևյալ թվահամարների տակ. №№ 2490, 2821, 3319, 3462—3467, 3645—3648, 3650—3658, 3718, 3719, 3770—3776, 3815—3820, 3913—3942, 4004—4009, 4066—4086, 4119, 4134—4150, 4152—4170, 4181, 4261, 4275, 4423, 4503, 6271, 7243, 7363, 7364, 7386, 7418, 7724, 7759, 8302, 8593, 9244, 10199։

Այս ձեռագրերից 2-ը (№№ 2821, 3319) Մատենադարան են մուտք գործել դեռևս 1885—1890 թվականների ընթացքում Մ. Սմբատյանցի ձեռքով, 1-ը (№ 6271)՝ 1930-ական թվականներին Տիրայր եպս. Մելիք-Մուշկամբարյանի ձեռագրերի հետ միասին, 8-ը (№№ 7363, 7364, 7386, 7418, 7724, 7759, 8302, 8593)՝ 1936 թվականին՝ Ստ. Լիսիցյանի գլխավորած ազգագրական արշավախմբի միջոցով, իսկ վերջին 2-ը (№№ 9244, 10199), որոնք դեռևս 1930 թվականին հանված են եղել ավերված վանքի փլատակների միջից, Մատենադարանին է հանձնել Սամվել Սաղաթելյանը, առաջինը՝ 1945, երկրորդը՝ 1963 թվականներին։ Մնացած 134 ձեռագրերը, ինչպես գիտենք, Էջմիածին է տեղափոխել Խ. Մուրադբեկյանը 1910 թվականին։

Նշված 147 ձեռագրերից 142-ը իրենց արտացոլումն են գտել հիշատակված 8 ձեռագրացուցակներից մի քանիսում, իսկ մնացած 5 ձեռագրերը (№№ 7759, 8302, 8593, 9244, 10199)՝ ոչ։ Հավանաբար եղել են նաև նկարագրությունից դուրս մնացած այլ ձեռագրեր, որոնք մեզ չեն հասել։

Արդ, ի՞նչ եղան Տաթևի գրատան մյուս ձեռագրերը, նկարագրված կամ չնկարագրված, որոնք մեզ չեն հասել։

Այս հարցին սպառիչ պատասխան է տալիս Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը։ Իր «Հայկական երեք մեծ վանքերը» աշխատության մեջ, անդրադառնալով Տաթևի գրատան ձեռագրերին, Մ. Մագիստրոսը գրում է. «Երբ 1904-ին ցուցակագրում էինք Տաթևի չափազանց փոքրացած ժողովածուն, սոսկումով լսեցինք, որ վերջի վանահայրը, գրադարանը կարգի բերելու անմբտությամբ, ժողովածուի այն օրինակները, որ անխնամ պահելու հետևանքով շատ էին քայքայված և կամ խոնավությունից թերթերն ամուր միմյանց սեղմված և մի տեսակ միաձույլ էին դարձած, այդպիսի օրինակները վառել է իբրև արդեն անպետք դարձած»[13]։

Ինչ-ինչ նկատառումներով Մ. Մագիստրոսն այստեղ չի հիշատակել ոչ այրված ձեռագրերի քանակը և ոչ էլ այրող վանահոր անունը։ Վերջերս, երբ Գ. Շերմազանյանի կազմած ցուցակի հիման վրա ստուգում էինք Տաթևի գրատան ձեռագրերը, մեր ուշադրությունը գրավեց ցուցակի վերջին էջի վրա Մ. Մագիստրոսի ձեռքով 1904 թվականին կատարված հետևյալ նշումը. «Վանքում ինձ տեղեկություն տվին, որ վանահայր և փոխանորդ Ներսես վ. Մելիք-Թանգյանը այն օրինակները, որ խոնավությունից իրար միացել և նորա մակացողությամբ այլևս անպետք էին դարձել, թվով 64 հատ, վառել է»[14]։

---

13 Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները, Երուսաղեմ, 1938, էջ 20։

14 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մագիստրոսի, № 7։